ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐՈՎ ԳՆՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն, որը գտնվում է ք.Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում, ստորև ներկայացնում է ՊԵԿ-ՇՀԱՊՁԲ-17-1-15/8 ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգով գնումներ կատարելու ընթացակարգի արդյունքում 2017թ-ի ապրիլի 25-ին կնքված ՊԵԿ-ՇՀԱՊՁԲ-17-1-15/8-4 ծածկագրով գնման պայմանագրում 2017թ-ի մայիսի 15-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառ: Պայմանագրով սահմանվել է, որ դրանով նախատեսված ապրանքի մատակարարումը իրականացվում է այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա:

Փոփոխության նկարագրություն: Պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման նպատակով 15.05.2017թ. կնքվել է համաձայնագիր:

Փոփոխության հիմնավորում: Պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման համար 2017 թվականին ՀՀ ԿԱ ՊԵԿ արտաբյուջետային միջոցների հաշվին նախատեսվել են ֆինանսական միջոցներ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Գ.Ղազարյանին:

Հեռախոս՝ 060 544-704:

Էլ. փոստ՝ gugks@mail.ru:

Պատվիրատու՝ **ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե**

Համաձայնագիր-1
25.04.17թ. կնքված N ՊԵԿ-ՇՀԱՊՁԲ-17-1-15/8-4 ծածկագրով գնման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

ք. Երևան **«15» մայիսի 2017թ.**

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն այսուհետ՝ «Գնորդ», ի դեմս ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի ղեկավար Ա.Սահակյանի մի կողմից, և «Կոմպասս» ՍՊԸ-ն, այսուհետ՝ «Վաճառող», ի դեմս ընկերության տնօրեն Ա.Մանվելյանի, մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 25.04.17թ. կնքված N ՊԵԿ-ՇՀԱՊՁԲ-17-1-15/8-4 ծածկագրով գնման պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 9.4-րդ կետը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Կողմերը որոշեցին՝

1.1. Պայմանագրի 9.2 կետին համապատասխան հաստատել ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը՝ համաձայն կից հավելվածի/կցվում է/:

1.2. Սահմանել, որ Գնորդը պայմանագրով նախատեսված մատակարարված ապրանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն համաձայնագրի հավելվածով սահմանված ժամկետներում, բայց ոչ ուշ քան 2017 թվականի դեկտեմբերի 25-ը:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3. Սույն պայմանագրում կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.4. Սույն համաձայնագիրը և հավելվածը կազմված է հայերեն լեզվով, /երկու/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Գնորդ	**Վաճառող**
ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե	«Կոմպասս» ՍՊԸ
ք. Երևան, Մ.Խորենացու-3,7	ք. Երևան, Չարենցի 66
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն	«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900013202016, 900013574018	Հ/Հ 1570010074570100
ՀՎՀՀ 02647057	ՀՎՀՀ 01545204
ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի ղեկավար՝	«Կոմպասս» ՍՊԸ-ի տնօրեն՝
Ա.Սահակյան	**Ա. Մանվելյան**
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

Հավելված
Հաստատված է
«25» ապրիլի 2017թ. կնքված
N ՊԵԿ-ՇՀԱՊՁԲ-17-1-15/8-4
գնման պայմանագրի փոփոխությամբ

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Հ/Հ	Ապրանքի անվանումը	Բյուջետային ծախսերի տնտ. դասակարգման հոդվածը*	Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 2017թ. արտաբյուջետային միջոցներով նախատեսված հատկացումների հաշվին, ըստ ամիսների՝ ընդ որում											
			փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	Մինչև 2017 թվականի դեկտեմբերի 25-ը	**Ընդամենը Տարի**
5	Կոշտ սկավառակ	5122					516 000	516 000	516 000	516 000	516 000	516 000	516 000	**516 000**

* Վճարվող գումարները ներկայացված են աճողական կարգով:

Գնորդ
ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե
ք. Երևան, Մ.Խորենացու-3,7
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական
վարչություն
Հ/Հ 900013202016, 900013574018
ՀՎՀՀ 02647057

ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի ղեկավար՝

Ա.Սահակյան

(ստորագրություն)
Կ.Տ

Վաճառող
«Կոմպասս» ՍՊԸ
ք. Երևան, Չարենցի 66
«Ամերիաբանկ» ՓԲԸ

Հ/Հ 1570010074570100
ՀՎՀՀ 01545204

«Կոմպասս» ՍՊԸ-ի տնօրեն՝

Ա. Մանվելյան

(ստորագրություն)
Կ.Տ